

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄ ԼԻՍԱԲՈՆՈՒՄ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏ. ԺՈԶԵ Դ. Ա. ՊԵՐՏԻԿԱՆԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մասնավոր հանձնարարությամբ Արևմտյան Եվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը 1969 թվականի դեկտեմբերի 9-ին մեկնում է Լիսաբոն՝ պաշտոնապես հանձնելու Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե Դ. Ա. Պերտիկանին, Հայոց Հայրապետի սեպտեմբեր 1 թվակիր սրբատառ կոնդակը, ազգային մեծ բարերար և Մայր Աթոռի հարազատ զավակ Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ:

Լիսաբոնում, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նորաշեն շենքի մեջ, դեկտեմբերի 9-ին տեղի է ունենում հոբելյանական հանդիսություն՝ նվիրված Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյակին՝ նախագահությամբ դոկտ. Ժ. Պերտիկանի և ի ներկայության հայկական բաժնի պաշտոնեության, հիմնարկության բոլոր անդամների, պաշտոնական բարձրաստիճան հյուրերի:

Հանդիսության ընթացքում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը ընթերցում է հայրապետական սրբատառ կոնդակը, որը Մայր Աթոռում պատրաստված էր գեղարվեստական ձևավորումով հայկական մանրանկարչության գեղեցիկ և ինքնատիպ ոճով:

Հայրապետական կոնդակի պորտուգալերեն թարգմանությունը նախապես բաժանվել էր հանդիսության բոլոր ներկաներին:

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժնի վարիչ պրն. Ռոբերտ Կյուլպենկյանը, հանուն կենտրոնական վարչության, սրտագին շնորհակալություն ու որդիական երախտագիտություն է հայտնում Ամենայն Հայոց Հայրապետին՝ «մեծ բարերարի անձին և խնամակալության մարմնույն համար եղած այս բացառիկ գնահատանքին և բարձր ուշադրության համար»,—գրում է տ. Սերովբե արքեպիսկոպոսը իր դեկտեմբեր 10 թվակիր նամակում:

Այնուհետև բոլոր ներկաների սրտագին ծափերի մեջ տ. Սերովբե արքեպիսկոպոսը

հայրապետական կոնդակը հանձնում է կենտրոնական վարչության նախագահ դոկտ. Ժ. Պերտիկանին, որը շնորհակալությամբ ընդունելով այն, խնդրում է սրբազանին «իր հարգանքն ու երախտագիտությունը հայտնել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, թե՛ կոնդակի բովանդակալից իմաստին և թե՛ անոր գեղարվեստականորեն ներկայանալի ձևին համար, ավելցնելով որ կոնդակը շրջանակի մը մեջ առնված պիտի պահվի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության մեջ իբրև գեղեցիկ հիշատակ մը Հայոց Հայրապետեն և Մայր Աթոռ ս. Էջմիածնեն»:

Նույն օրը, ավելի ուշ, Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան հոբելյանի առիթով, տեղի է ունեցել հայ երաժշտության և, մանավանդ, անմահ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկույթ, որին իր շնորհալի մասնակցությունն է բերել՝ այս առիթով հատկապես Համբուրգից հրավիրված հայտնի երգչուհի Լուիզա Պոզապալյանը:

Հանդիսության երաժշտական ծրագիրը բաղկացած է եղել երկու մասերից: Առաջին մասը՝ ամբողջությամբ կոմիտասյան երգերից, երկրորդը՝ հայաստանյան և արտասահմանյան երգերից: «Երգչուհին իր բացառիկ և հմայիչ ձայնով, ինչպես նաև Կոմիտասն և հայ երաժշտական արվեստը, մեծ տպավորություն ձգեցին բոլոր ներկաների վրա, որոնք անվերապահորեն բարձր գնահատեցին Կոմիտաս վարդապետի երաժշտական տաղանդը և հայ երաժշտության ինքնատիպ արվեստը»,—գրում է տ. Սերովբե արքեպիսկոպոսը:

Լիսաբոնում ապրող փոքրաթիվ հայ համայնքի համար դեկտեմբերի 9-ը ազգային հպարտության անմոռանալի մի օր հանդիսացավ:

Տեղական մամուլը նույնպես մեծ գովեստով է խոսել Գալուստ Կյուլպենկյանի բացառիկ բարեգործության, ինչպես նաև հայ երաժշտական մշակույթի մեծության և երգչուհի Լուիզա Պոզապալյանի կատարողական բարձր արվեստի մասին: